ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ
ՎԵՐԱՀՍԿԻՉ - ՎԵՐՍՏՈՒԳԻՉ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

31.03.2025թ.

Ե Զ Ր Ա Կ Ա Ց Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Շիրակի մարզի Գյումրի համայնքի 2025 թվականի մարտի 30-ի համամասնական ընտրակարգով անցկացվող ավագանու արտահերթ ընտրություններին մասնակցող կուսակցությունների, կուսակցությունների դաշինքների նախընտրական հիմնադրամներում եղած միջոցների օգտագործման վերաբերյալ հայտարարագրերի ստուգման արդյունքների

Շիրակի մարզի Գյումրի համայնքի 2025 թվականի մարտի 30-ի համամասնական ընտրակարգով անցկացվող ավագանու արտահերթ ընտրություններին մասնակցող բոլոր կուսակցությունները և կուսակցությունների դաշինքները «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի (այսուհետ՝ Ընտրական օրենսգիրք) սահմանված կարգով և ժամկետներում բացել են նախընտրական հիմնադրամներ և Կենտրոնական ընտրական հանձնաժողովի վերահսկիչ-վերստուգիչ ծառայություն ներկայացրել նախընտրական հիմնադրամներում կատարված մուծումների և դրանց օգտագործման վերաբերյալ առաջին հայտարարագիրը, ինչպես նաև կատարված վճարումները հավաստող փաստաթղթերը և կնքված պայմանագրերը:

Այն բանկերը, որտեղ բացվել են ժամանակավոր հատուկ հաշվեհամարներ, սահմանված ժամկետներում Կենտրոնական ընտրական հանձնաժողովի վերահսկիչ-վերստուգիչ ծառայություն ներկայացրել են տեղեկանքներ՝ նախընտրական հիմնադրամների ֆինանսական մուտքերի և ելքերի վերաբերյալ:

Բանկերից ստացված տեղեկանքները ընտրությունների մասնակցող կուսակցությունների, կուսակցությունների դաշինքների կողմից ստացված հայտարարագրերի, ինչպես նաև կատարված վճարումները հավաստող փաստաթղթերի և կնքված պայմանագրերի հետ համադրելով՝ Վերահսկիչ-վերստուգիչ ծառայությունը նախընտրական հիմնադրամներում եղած միջոցների օգտագործման վերաբերյալ հայտարարագրերում խախտումներ չի հայտնաբերել:

Միաժամանակ, Վերահսկիչ-վերստուգիչ ծառայությունն արձանագրում է, որ ընտրություններին մասնակցող կուսակցությունների, կուսակցությունների դաշինքների կողմից ներկայացված առաջին հայտարարագրում ներառված չեն Ընտրական օրենսգրքով պարտադիր հայտարարագրման ենթակա որոշ ծառայությունների մատուցման համար կատարված ծախսերը (օրինակ, ընտրական շտաբների տեղակայման նպատակով տարածքների վարձակալման ծախսերը, նախընտրական քարոզչության ընթացքում սոցիոլոգիական հարցումների և հետազոտությունների իրականացման ծախսերը և այլն):

Ընտրական օրենսգրքի 28-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ հայտարարագրում պահանջվում է նշել պարտադիր հայտարարագրման ենթակա «յուրաքանչյուր ծառայության, գույքի, ապրանքի ձեռքբերման համար կատարված ծախսերը, դրանց կատարման ժամկետը, ծախսերի կատարումը հաստատող փաստաթղթերի տվյալները.»: Ընտրական օրենսգիրքն օգտագործում է «կատարված ծախսերը» ձևակերպումը, որը որոշ դեպքերում տարընկալման տեղիք է տալիս՝ հանգեցնելով այն ընկալման, որ մինչև վերջին հայտարարագիրը ներկայացնելը նախընտրական հիմնադրամներ կատարված մուծումների և դրանց օգտագործման վերաբերյալ հայտարարագրերում պետք է ներառվեն պարտադիր հայտարարագրման ենթակա յուրաքանչյուր ծառայության, գույքի, ապրանքի ձեռքբերման համար միայն փաստացի կատարված ծախսերը:

Սակայն, Ընտրական օրենսգրքի իրավակարգավորումների հիմքում դրված է այն տրամաբանությունը, ըստ որի նախընտրական հիմնադրամներ կատարվող մուծումների, ծախսերի և դրանց հաշվարկման նկատմամբ թափանցիկությունն ու հրապարակայնությունն ապահովելու համար ընտրություններին մասնակցող կուսակցությունները (կուսակցությունների դաշինքները) իրենց հայտարարգրում պետք է ներառեն պարտադիր հայտարարագրման ենթակա յուրաքանչյուր ծառայության, գույքի, ապրանքի ձեռքբերման համար ոչ միայն փաստացի կատարված, այլ նաև կատարվելիք ծախսերը: Նման մոտեցում օրենսդիրն ամրագրել է նաև 2025 թվականի ապրիլի 1-ից ուժի մեջ մտնող՝ 2024 թվականի դեկտեմբերի 5-ի «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ սահմանադրական օրենքի 23-րդ հոդվածում, որով Ընտրական օրենսգրքի 28-րդ հոդվածը շարադրվել է նոր խմբագրությամբ: Նշված կարգավորման համաձայն՝ հայտարարագրում պետք է նշվեն ոչ միայն պարտադիր հայտարարագրման ենթակա յուրաքանչյուր աշխատանքի, ծառայության, ապրանք ձեռք բերելու համար կատարված ծախսերը, դրանց կատարման ժամկետը, ծախսերի կատարումը հաստատող փաստաթղթերի

տվյալները, այլ նաև պարտադիր հայտարարագրման ենթակա յուրաքանչյուր աշխատանքի, ծառայության, ապրանք ձեռք բերելու համար *կատարվելիք ծախսերը*, որոնց վճարումն իրականացվելու է հայտարարագիրը ներկայացնելու՝ Ընտրական օրենսգրքով սահմանված ժամկետից հետո՝ հայտարարագրին կցելով ծախսերի կատարման անհրաժեշտությունը հավաստող փաստաթղթեր:

Հիմք ընդունելով վերոգրյալը և հաշվի առնելով Ընտրական օրենսգրքի առկա կանոնակարգումները՝ Վերահսկիչ-վերստուգիչ ծառայությունը, ուսումնասիրելով կուսակցությունների, կուսակցությունների դաշինքների կողմից ստացված հայտարարագրերը, ինչպես նաև կատարված վճարումները հավաստող փաստաթղթերը և կնքված պայմանագրերը, ***փ ա ս տ ու մ է***, որ.

Բոլոր սուբյեկտների կողմից ներկայացված՝ նախընտրական հիմնադրամներում եղած միջոցների օգտագործման վերաբերյալ հայտարարագրերում խախտումներ չեն հայտնաբերվել և դրանք համապատասխանում են Ընտրական օրենսգրքով սահմանված կանոնակարգումներին:

Կենտրոնական ընտրական հանձնաժողովի
Վերահսկիչ-վերստուգիչ ծառայության ղեկավար՝ **Տ. ԲԱԲԻԿՅԱՆ**